"ARMOBIL"
CJSC
Arabkir, A. Hekimyan 1
Yerevan 0052
Republic of Armenia
Telephone:**8-111**, (374 60) 53-35-01
(374 12) 81-20-61, (374 10) 20-02-65
E-Mail: info@armobil.am
URL: www.armobil.am

«ԱՐՄՈԲԻԼ»
ՓԲԸ
Արաբկիր, Ա. Հեքիմյան 1
Երևան 0052
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.**8-111**, (374 60) 53-35-01
(374 12) 81-20-61, (374 10) 20-02-65
info@armobil.am
www.armobil.am

Հայաստանի Հանրապետության Պետական Եկամուտների Կոմիտեի

ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2026/1 ծածկագրով մրցույթի անցկացման
հանձնաժողովի նախագահ Սարգիս Բաբայանին

«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ե. Այվազյանից

Հարգելի գործընկերներ,

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 5.1 հոդվածը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 50-րդ կետի համաձայն ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի: Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա կնքված պայմանագրի մասին հայտարարությունում նշվում է նաև, որ դրանով սահմանված ժամկետում պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնման տվյալ ընթացակարգին մասնակցելու իրավերի հիման վրա հայտ ներկայացրած մասնակիցները կարող են պատվիրատուին ներկայացնել կնքված տվյալ պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ: Հայտարարությունում նշվում է նաև պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն: Գրավոր պահանջին կից ներկայացվում են՝ այն էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց միջոցով պատվիրատուն կարող է կապ հաստատել պահանջը ներկայացրած անձի և վերջինիս կողմից լիազորված ֆիզիկական անձի հետ:

Վերոգրյալից ելնելով **«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Երվանդ Այվազյանի, ցանկություն ունի մասնակցելու ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2026/1 ծածկագրով**

գնման ընթացակարգի շրջանակում կնքված գնման պայմանագրի արդյունքի ընդունմանը, մասնավորապես՝ մատուցվող անվտանգության ապահովման ծառայությունների ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2026/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այն է տեխնիկական բնութագրի և այլ համապատասխան) պահանջներին համապատասխանության ընդունմանը, այն է ամսական կտրվածքով կատարվող հանձնման-ընդունման գործընթացին: Գործընթացին մասնակցելու է ընկերության գործադիր տնօրեն՝ Երվանդ Այվազյանը, և ընկերության կողմից լիազորված ներկայացուցիչներ՝ իրավաբան, գնումների մասնագետ, լրագրողներ: Ընկերության էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարն է info@armobil.am; Հեռ.՝ +374 95 57 95 73, +374 99 19 99 61:

Կից ներկայացնում եմ՝

1) Գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած անձի կողմից ստորագրված բնօրինակ հայտարարությունը:

Հարգանքով՝
«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝
Ե. Այվազյան

«ԱՐ-ՄՈԲԻԼ»
"AR-MOBIL"
"АР-МОБИЛ"
01529671

07/01/2026թ.

"ARMOBIL"
CJSC
Arabkir, A. Hekimyan 1
Yerevan 0052
Republic of Armenia
Telephone:**8-111**, (374 60) 53-35-01
(374 12) 81-20-61, (374 10) 20-02-65
E-Mail: info@armobil.am
URL: www.armobil.am

«ԱՐՄՈԲԻԼ»
ՓԲԸ
Արաբկիր, Ա. Հեքիմյան 1
Երևան 0052
Հայաստանի Հանրապետություն
Հեռ. **8-111**, (374 60) 53-35-01
(374 12) 81-20-61, (374 10) 20-02-65
info@armobil.am
www.armobil.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲ Ընկերության գործադիր տնօրեն Երվանդ Այվազյանս, սույնով հավաստում եմ, որ ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2026/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում կնքված գնման պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին մասնակցելով չունեմ շահերի բախում:

Հարգանքով՝
«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝
Ե. Այվազյան

07/01/2026թ.